



The Armenian Center  
for National and International Studies

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и  
национальных исследований

**ՀՈՎՍԵՓ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ**

*Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոնի փորձագետ*

**ԴԵՆԱՑԻՖԻԿԱՑԻԱՆ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ Է**

**ՀԱՐՅԸ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԵՋ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՐԶ ՆԵՐԱՌՄԱՆ ՄԵՋ ԶԷ,  
ՀԱՐՅԸ ԹՈՒՐԹԵՐԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՐՁՆԵԼՆ Է**

22 ապրիլի 2010թ.  
Երևան

Ներկայացված տեսակետները միմիայն անհատ հոդվածագիրներինն են, և կարող են չհամընկնել կենտրոնի դիրքորոշումների հետ:

© 2010, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:  
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրապարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:

© 2010, Армянский центр стратегических и национальных исследований.  
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2010, Armenian Center for National and International Studies.  
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

# Դենացիֆիկացիան Թուրքիայի արդիականացման միակ ուղին է

*Հարցը Եվրոպայի մեջ Թուրքիայի պարզ ներառման մեջ չէ, հարցը թուրքերին  
Եվրոպացի դարձնելն է*

## Նոր Թուրքիայի համար պետք են նոր թուրքեր

Թուրքական ազգի, ուրեմնե թուրքական ինքնության ձեւավորման գործընթացը դեռ չի ավարտվել, եւ Արեւմուտքի գործն է բաց չըողնել դրանում ակտիվ մասնակցության հնարավորությունը՝ օգնելու համար թուրք ազգին արդիականանալ:

Այսօր իրապես երեք աշխարհագրական եւ երեք քաղաքական թուրքիաներ գոյություն ունեն: Եվրոպական Թուրքիան ունի Եվրոպայի հետ մերձենալու, իսկ հեռանկարում՝ նրա մասը դառնալու առավելագույն ներուժը: Եթե ամբողջ Թուրքիան բաղկացած լինէր Ստամբուլից, Արեւելյան Թրակիայից եւ Իզմիրից՝ շրջակայքով, 25-30 միլիոն բնակչությամբ, ապա ե՛ւ նրա ե՛ւ Եվրոպայի մոտ սերտաճման գործում ավելի քիչ խնդիրներ կլինէին: Սակայն արեւմտյան Թուրքիան “ծանրացած է” հետամնաց կենտրոնականով եւ արեւելյանով:

Մոտավորապես երեք մասերի է բաժանվում նաեւ քաղաքական Թուրքիան: Արդի թուրքական հասարակության մեջ գերակշռող իսլամիստները՝ օգտվելով ժողովրդավարության ընձեռած հնարավորություններից, քայլ առ քայլ նվաճում են մինչեւ 2002թ. իշխող աշխարհիկ ազգայնականներից: Վերջիններս քաղաքական ասպարեզի երկրորդ հիմնական ուժն են: Քեմալ Աթաթուրքի հետեւորդները, նրանք դեռեւս ունեն գերակշռող ազդեցություն բանակի, ինչպեսեւ պետության ներսում գոյություն ունեցող այլ՝ “խորքային պետության”[1] վրա: Եւ երրորդ, առավել թույլ Թուրքիան՝ դա ազատականներն են եւ քրդերը, որոնք թեեւ ունեն իրարից տարբեր նպատակներ, սակայն միասնական են թե՛ որպես երկրում իշխող կղերական-ազգայնական քաղաքական վերնախավին եւ թե՛ վերջինին բնորոշ մենթալիտետին: Եվ նրանք, ովքեր կարծում են, որ Թուրքիայի հարավ-արեւելքում անկախ Քրդստանի ստեղծումը այս երկրի քաղաքական եւ էթնիկ հիմնախնդիրների հանգուցալուծումը կարող է լինել, պետք է խորհեն, որ եթե դա տեղի ունենա, ապա հանձինս քրդերի ինչպիսի դաշնակցից կարող է զրկվել Թուրքիայի առաջադեմ հանրությունը:

Ուրեմն այդ թուրքիաներից ո՞ր մեկին կաջակցի Արեւմուտքը, ինչպիսի՞ Թուրքիային են ուզում խրախուսել ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը. Օրհան Փամուկի եւ Հրանտ Դինքի՞, Իբրահիմ Բայլանի եւ Յւլմազ Քերիմոնի՞ [2], թե Թալեաթի եւ Էրդողանի:

Իսլամիստների ութնամյա կառավարումից հետո պարզ դարձավ, որ իրենց մենթալիտետով նրանք շատ չեն տարբերվում ազգայնականներից: Միակ տարբերությունը, թերեւս, այն է, որ արդի թուրքական հանրապետության ազգայնական հիմքին վերադարձավ եւ ավելացավ դեռ օսմանյան ժամանակաշրջանում գոյություն ունեցող կղերական հիմքը:

Վերջապես, այդ ճանապարհին Թուրքիան կանգ չի առնում անգամ այնպիսի քայլեր կատարելու առջեւ, որոնք հակառակ են ժողովրդավարական աշխարհի շահերին: Թուրքական դիվանագետները շարունակում են միզել արեւմտյան դեսպանատների պատերին՝ ինչպես ուղղակի[3], այնպես էլ փոխաբերական իմաստով:

## **Թուրքիայով պետք է զբաղվեն նախկին սովետոլոգները**

Նախկինում հզոր կայսրություն՝ մերօրյա Թուրքիան փաստացի դեռ մնում է թեև ավելի փոքր չափեր ունեցող, սակայն՝ մինիկայսրություն է նրանում գործող մեխանիզմները գրեթե նույնական են նախկին ԽՍՀՄ-ում գործող մեխանիզմների հետ: Թուրքիան պետք է անցնի հասարակության ժողովրդավարացման, ազատականացման, ինչպես է նրանում ապրող ազգերի եւ ազգությունների ապագաղութացման նույն ուղին, որն անցավ ԽՍՀՄ-ը՝ ազգային, կրոնական եւ այլ փոքրամասնությունների իրավունքների հարգման եւ պաշտպանության միջոցով: Այսպիսով, Թուրքիայի արդիականացման եւ ժողովրդավարացման հիմնախնդիրներով առավել արդյունավետ կարող են զբաղվել արեւմտյան նախկին սովետոլոգները եւ հենց նրա՝ նց քաղաքագիտական դպրոցով անցած նոր թուրքագետները:

Այն, որ երկու երկրների եւ ժողովուրդների միջեւ փոխհարաբերությունները մինչեւ 2009թ. դրանց բարելավմանն ուղղված հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը շատ ավելի բարվոք վիճակում էին, քան այսօր, եւս մեկ անգամ ապացուցում է այն կարեւորությունը, որը հատկապես Թուրքիայի հարեւանների համար ունեն այդ երկրի կողմից սեփական պատմության հետ առերեսվելու, այն վերաիմաստավորելու եւ քաղաքացիների գերակշռող մասի մտածողությունն արմատապես փոփոխելու հանգամանքները:

Մինչ որոշ արեւմտյան քաղաքագետներ հուսով են, որ ժողովրդավարությունը վաղ թե ուշ կբերի նրան, որ Թուրքիայի երկու ծայրահեղ բեւեռներն էլ իրենց կվարկաբեկեն, իսկ մինչ այդ Արեւմուտքի լավագույն գործընկերներ կմնան չափավորականները[4]՝ իրական վիճակը Թուրքիայում խոսում է այլ բանի մասին. հասարակությունը հետզհետե ավելի է արմատականանում ինչպես իսլամական, այնպես էլ՝ ազգայնական ուղղություններով:

## **Թուրքիայի հասարակական եւ հումանիտական արդիականացմանը աջակցություն ցուցաբերելու գործում Արեւմուտքը կատարյալ անհաջողության մատնվեց**

Վերջին 65 տարում Արեւմուտքին, փաստորեն, չհաջողվեց Թուրքիայում ընդգրկուն կերպով առաջ մղել քաղաքակրթական, հումանիտական արժեքներ: Այսպես, այսօր 70 միլիոնանոց Թուրքիայում ազատամիտ հասարակայնությունը, քաղաքացիական հասարակությունը կազմում է լավագույն դեպքում 4-5 միլիոն մարդ: Ընդորում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դա, ինչպես է անցած դարասկզբին մեծապես տարատեսակ ազգային, կրոնական եւ այլ տեսակի փոքրամասնություններն են, ապա Արեւմուտքի ֆիասկոն հատկապես ակնառու կդառնա: Եվ երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայեփ Էրդողանը հայտարարում է, որ կարտաքսի երկրից Հայաստանի բոլոր քաղաքացիներին, ապա նման արտահայտությունների դեմ հենց Թուրքիայից հնչող բողոքի ձայները հազիվ լսելի են:

Այն, որ եվրատլանտյան մեյնսթրիմում Թուրքիայի 65-ամյա մշտական ներկայությունից հետո այդ երկրում դեռ հետապնդում են առաջադեմ գրողների, լրագրողների, հասարակական եւ քաղաքական գործիչների, սպանվեց նշանավոր ազատական Հրանտ Դինքը, իսկ ոստիկանները, մարդասպանին ձեռքակալելուց առաջ նախ լուսանկարվում են նրա հետ՝ որպես ազգային հերոսի, եւ այս ամենից հետո ի նշան բողոքի Ստամբուլի փողոցներ են դուրս գալիս եւ վանկարկում “Մենք Հրանտ Դինքն ենք”, “Մենք հայեր ենք” ընդամենը մի քանի տասնյակ հազար ազատ մտածող թուրքեր, - համաձայնեք լուրջ մտորումների տեղիք է

տալիս: Ավելին. այն, որ այս ասիական, արմատներով դեպի ալթայական տափաստաններ ձգվող ազգի եվրոպականացմանն օժանդակելու վրա արեւմտյան ժողովրդավարական հիմնադրամների կողմից ծախսված հսկայական միջոցները, փաստորեն, բերել են անմխիթար արդյունքների – անհանգստության հիմք է: Այսօր անգամ իրանցի, աֆղանստանցի, հնդիկ եւ լիբանանցի ներգաղթյալներին ադապտացնող եւ ձուլող այնպիսի հզոր մեքենան, ինչպիսին է Միավորված Եվրոպան, տարիներ շարունակ իր անգործությունն է ցուցաբերում եվրոպական երկրների տարածքում հայտնված թուրքական փոքրամասնության պարագայում: Զարմանալի չէ, որ եվրոպացիները չեն շտապում ներառել Թուրքիան ԵՄ կազմում. այլ դեպքում ինչի՞ կտրանսֆորմացվի “եվրոպացի” հասկացությունը:

Ակնհայտ է, որ այս բարդ խնդրի լուծման գործում անհապաղ եւ արմատական միջոցառումներ են պետք: Անհրաժեշտ է նոր եւ արդյունավետ գործող նախագիծ: Այլապես խնդիրը գնալով կխորանա: Տեսեք, դա արդե՛ն տեղի է ունենում. Թուրքիան՝ հանձնիս իր վարչապետի մեղադրում է Չինաստանին ույգուրների ցեղասպանություն իրագործելու մեջ՝ Մինցզյանում փողոցային բախումների ընթացքում մի քանի տասնյակ մարդու զոհվելու հիման վրա, նա մեղադրում է Գազայի հատվածում ցեղասպանություն կազմակերպելու մեջ Իսրայելին, միաժամանակ անհեթեթ համարում ցեղասպանության փաստի առկայությունը Դարֆուրում, ուր իրեն հոգեհարազատ սուղանյան կառավարությունը եւ նրա կամակատարները ոչնչացրեցին հարյուր հազարավոր սեւամորթ բնակչություն: Այս ամենից հետո ինչպե՞ս հուսալ, որ արդի Թուրքիան կճանաչի օսմանյան ղեկավարների մեղքը 1915թ. ոչ միայն հայերի ցեղասպանությունը կազմակերպելու եւ իրագործելու, այլ նաեւ հայ ժողովրդի՝ վերապրած մնացորդներին իրենց հայրենիքի 90 տոկոսից զրկելու մեջ, որտեղ նա անընդմեջ ապրել էր ավելի քան երեք հազար տարի:

Ուրեմն անվանենք իրերն իրենց անուններով. անհրաժեշտ է թուրքական իշխող էլիտաների հիմնական մասի դենացիֆիկացիայի (ապաազգայնականացման) բանաձեռ: Երկա՞ր է դեռ “քաղկոռեկությունը” ստիպելու Արեւմուտքի քաղաքական եւ հասարակական գործիչներին տեսնելով այս ամենը՝ համառորեն լռել: Այդ հանդուրժողականությունը մի՞թե, չի սաղորդի ազգայնականության ավելի խորացմանը, ինչը ժամանակին արդեն տեղի ունեցել է Եվրոպայի մեկ այլ վայրում: Տեսե՛ք, իր պահանջները չբավարարելու դեպքում՝ Թուրքիան արդեն սպառնում է աշխարհին ապակայունացմամբ Կովկասում, այն է՝ հրահրել իր “կրտսեր եղբորը”՝ Ադրբեջանին պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Ադրբեջանն արդեն ծախսում է ռազմական կարիքների համար ավելին, քան Հայաստանի ամբողջ պետական բյուջեն է, իսկ թուրք ռազմական հրահանգիչները իրենց ադրբեջանցի ազգակիցներին սովորացնում են այն ամենը, ինչը, ի միջի այլոց, սովորել են իրենց արեւմտյան գործընկերներից: Մի՞թե պարտադիր պետք է սպասել այնքան, մինչեւ մերօրյա թուրքական էլիտայի մի մասը կվերածվի նոր Թալիբանի[5], եւ միայն այդ բանից հետո սկսել խոսել եւ գործել:

Թուրքիայի վարչապետի այն հայտարարությունը, որ եթե արեւմտյան երկրների հայկական համայնքները շարունակեն 1915թ. Ցեղասպանության ճանաչմանն ուղղված արշավը, ապա Թուրքիայում գտնվող Հայաստանի բոլոր քաղաքացիները կարող են արտաքսվել երկրից (ի դեպ, 1915թ. Ցեղասպանությունը եւս սկսվեց հայերի տեղահանությունից), ցավոք սրտի, լիովին պրագմատիկ են ներքին քաղաքականության եւ սպասվող ընտրությունների տեսանկյունից: Էրդողանը հրաշալի հասկանում է, թե ինչ է պետք ասել՝ թուրքերի մեծամասնությանը դուր գալու համար, ինչպիսի տրամադրություններին է պետք ընդառաջել՝ ընտրազանգվածը չկորցնելու եւ իշխանության ղեկին մնալու համար: Նա ընդամենը բավարարում է ներքին հասարակական պահանջարկը ազգայնամոլական եւ այլատյաց քաղաքական արտադրանքի վրա: Պահանջարկ, որը միջազգային հանրության լռելյայն խրախուսման եւ այն չնկատելու կեղծ “քաղաքականապես կոռեկտության”

շրջանակներում արվող փորձերի հանգույն տարեցտարի ավելանում է: Փաստերը խոսում են: Այսպես, թուրքական “Հյուրիեթ դեյլի նյուզ” պարբերականը՝ լուսաբանելով մի սոցիոլոգիական հարցում[6], նշում է, որ թուրքերի 50-70 տոկոսը չէր ցանկանա ունենալ ամերիկացի, հրեա կամ քրիստոնյա հարեւան, իսկ 54 տոկոսը հանդուրժողական վերաբերմունք ունի կոտանքների հանդեպ, կամ գտնում է, որ դրանք պետք է օրինականացվեն: Հարցումից, որն անց է կացվել թուրքական “Մաբանչի” համալսարանի երկու պրոֆեսորների ղեկավարությամբ, պարզ է դառնում, որ թուրքերի միայն 12 տոկոսը դրական կարծիք ունի քրիստոնյաների մասին, 10 տոկոսը՝ հրեաների եւ 7 տոկոսը՝ աթեիստների մասին: Թուրքերի բացարձակ մեծամասնությունը չի կիսում արեւմտյան արժեքները: PEW վարկանիշային գործակալության՝ 2009թ. անցկացված հարցման համաձայն՝ թուրքերի 69%-ը հայտարարել է, որ “չի սիրում” ԱՄՆ-ին, եւ միայն 14%-ն է ջերմ զգացմունքներ տածում այդ երկրի հանդեպ: Ընդ որում, թուրքերի 37.5%-ը համարում է ԱՄՆ-ին Թուրքիայի հիմնական արտաքին քաղաքական հակառակորդ: Թուրքերի 59%-ը խոստովանել են, որ չի սիրում Եվրամիությունը: Եւ սա այն դեպքում, որ միաժամանակ թուրքերի 55%-ը կուզենար տեսնել սեփական երկիրը ԵՄ կազմում:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009թ.-ի ամփոփիչ գեկույցի՝ Եվրոպական դատարանի ստացած՝ մարդու իրավունքների խախտումների վերաբերող հայցերի թվով (2395) Թուրքիան առաջինն է: Ընդ որում, այդ տարվա ցուցանիշը նախորդի համեմատ 27 տոկոսով ավելացել է:

Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը սկսել է Բալկաններում Օսմանյան կայսրության մշակութային ժառանգությանը պատկանող հուշարձանների վերականգնման եւ վերանորոգման լայնածավալ նախագիծ, այն դեպքում, երբ հենց Թուրքիայում հայկական մշակութային ժառանգությանը պատկանող հազարավոր հուշարձաններ շարունակում են ոչնչանալ կամ անգամ ոչնչացվել եւ, հավանաբար, ի “փոխհատուցում” դրան՝ վերջերս վերանորոգվեց ընդամենը մեկ հայկական հուշակոթող՝ եկեղեցի Աղթամար կղզում, այն էլ արգելվել է վրան խաչ տեղադրել:

Այսօր արեւմտյան բազմաթիվ հիմնադրամներ ծախսում են տասնյակ միլիոնավոր դոլարներ եւ եվրո՝ համոզելու համար Թուրքիայի հարեւաններին ու նախելառաջ՝ հայերին, որ այդ երկիրն այլեւս այն չէ, ինչ 1915թ.-ին էր, որ այն դարձել է մարդասեր եւ բավականին ժողովրդավար: Միգուցե ավելի արդյունավետ կլիներ, եթե այդ միջոցները ծախսվեին թուրքերին իրականում փոխելու վրա:

20-րդ դարի անգլիական գաղութատիրությունը գանդիզմից սկիզբ առած վերախմաստավորման շնորհիվ արդեն նախորդ դարավերջին գրեթե ամբողջությամբ վերափոխվեց գլոբալ քաղաքական պատասխանատվության, գերմանական գաղութատիրությունը, շնորհիվ 1945թ. դենացիֆիկացիայի՝ գլոբալ զոջման եւ քավության: Մինչդեռ օսմանյան գաղութատիրությունը, շնորհիվ գերտերությունների բազմադարյա, մինչ օրս էլ շարունակվող սիրաշահումների եւ խրախուսման վերածվեց գլոբալ նեոօսմանյան բազմավեկտոր եւ հավակնոտ գոռոզամտության եւ ատելության:

Թուրքիայի դենացիֆիկացիայի իրականացման հարցը 1915թ. ի վեր մնացել է արդիական, իսկ դենացիֆիկացիայի՝ ժամանակին փորձարկված մեթոդաբանությունը՝ կիրառելի եւ արդյունավետ:

## **Իրական է արդյոք ազատական Թուրքիան**

Իր կազմավորման ութ դարերի ընթացքում ձուլելով իր մեջ միլիոնավոր հույների, հայերի, հրեաների, լազերի, քրդերի, հյուսիսկովկասցիների, ալբանացիների եւ արաբների՝

թուրքական ազգն իրապես ունի բավարար ներուժ առավել արդիական, ժողովրդավար, անվտանգ եւ կանխատեսելի դառնալու համար: Բայց դա կարող է տեղի ունենալ ոչ թե շնորհիվ, այլ ի հեճուկս ազգայնականների եւ արմատական իսլամիստների: Թուրքիայում միայն նոր-նոր ձեւավորվող, դեռ փոքրաթիվ ազատական-ժողովրդավարական քաղաքացիական հասարակությունը, որը կենտրոնացած է գերազանցապես Ստամբուլում, կարող է բացահայտել այս երիտասարդ էթնոսի թաքնված քաղաքակրթական ներուժը: Պատահական չէ, որ իր գոյության մի քանի դարերի ընթացքում Թուրքիան առաջին անգամ աշխարհին տվեց փոքրիշատե պատկառելի մշակութային գործիչ՝ ի դեմս ազատական Օրհան Փամուկի: Եթե այսօր Արեւմուտքին չհաջողվի էապես աջակցել եւ պաշտպանել թուրքական հասարակայնության առաջադեմ հատվածի շարժումը, ապա հայտնի չէ, թե արդյո՞ք դրա հնարավորությունը կմնա նաեւ վաղը, երբ Անկարան կավարտի իր աշխարհաքաղաքական ուղղվածության փոփոխման գործընթացը ինչպես Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ համաշխարհային քաղաքականության մեջ՝ համամարդկային մարդասիրական արժեքներին հակառակ ուղղությամբ:

1915թ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության տարեկիցին ստիպված ենք ընդունել, որ այդ ահավոր ողբերգությանը զոհ գնացած եւ իր հայրենիքից զրկված ժողովուրդը դեռ ունի բոլոր հիմքերը անհանգստության համար: Եւ ոչ միայն նա...

*Հովսեփ Խուրշուդյան,  
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ)  
ավագ փորձագետ, ք. Երեւան*

*Հոդվածը հրատարակվել է.*

**Foreign Policy Journal** (ԱՄՆ). [foreignpolicyjournal.com/2010/04/30/surmounting-nationalism-is-turkeys-sole-path-toward-modernization/](http://foreignpolicyjournal.com/2010/04/30/surmounting-nationalism-is-turkeys-sole-path-toward-modernization/),

**Լրագիր** էլեկտրոնային պարբերականում (Հայաստան). <http://ragir.am/armsrc/comments34271.html>,  
Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի (Ռուսաստան) կայքում. <http://ia-centr.ru/expert/7821/> :

[1]. Այս երեւոյթի տիպիկ արտահայտումն է “Էրզենեկոն” կազմակերպությունը:

[2]. Շվեդիայի խորհրդարանի՝ թուրքական ծագում ունեցող պատգամավորներ, ովքեր քվեարկել են այդ երկրի կողմից 1915թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչելու օգտին:

[3]. 07.04.2010թ.-ին տեղի ունեցած միջադեպը, երբ Աֆղանստանում թուրքական դեսպանը միզել էր այդ երկրում ԱՄՆ դեսպանատան պատին:

[4]. Նիկ Դանֆորտ (NICK DANFORTH), ("Foreign Policy", CIIA), “How the West Lost Turkey”, [http://www.foreignpolicy.com/articles/2009/11/25/how\\_the\\_west\\_lost\\_turkey?page=0.1](http://www.foreignpolicy.com/articles/2009/11/25/how_the_west_lost_turkey?page=0.1)

[5]. Հիշենք, որ ժամանակին թալիբները եւս ուժեղացան Արեւմուտքի ջանքերի շնորհիվ:

[6]. <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=mamma-li-turchi-2009-11-19>